

## **ՏԵՄԲՐ 2-Ը ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏԱԿԱԶՄԻՉ ՄԻՋՈՑ**

Հողվածը նպատակ ունի քննության առնել հնչյունաբանության բնագավառին վերաբերող մի շարք ընդհանուր տեսական խնդիրներ և կատարել գործնական նյութի վերլուծություն՝ հիմնվելով տեսական քննության վրա:

Ձայնի տեմբրը ձայնաստեղծման միջոցների վերհատությային բարդ համալիր է, որի գործառույթը պայմանավորում է խոսքում իմաստների տարբեր հուզարտահայտչական-գնահատողական նրբերանգների առաջացումը: Այնպիսի հիմնական ձայնաստեղծման միջոցների փոխազդեցության ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ տոնի շարժումը, ձայնի բարձրությունը, ձայնածավալը, տեմպը, ձայնորակը և դրանց հարաբերակցությունը խոսքային վերարտադրման համատեքստի հետ, իրականացվում է տեմբր 2-ի միջոցով:

Գիտական հաղորդակցման ռեգիստրում «չնշույթավորված» տեմբր 2-ի հարցն առավել կարևորվում է, քանի որ հատկապես դրա վրա է կառուցվում գիտական խոսքը, որում հաղորդումը գերիշխում է ներագոյմանը: Խնդիրը համակողմանի քննության ենթարկելու նպատակով նախ դիտարկենք չնշույթավորված տեմբր 2-ը, որի ֆոնի վրա էլ առավել ակնառու կդիտվեն նշույթավորված տեմբր 2-ի առանձնահատկությունները:

Մինչ այժմ, գիտական խոսքի ճարտասանությունն ուսումնասիրելիս, մասնագետների հիմնական ուշադրությունը սևեռվել է այն հատուկ հնարների վրա, որոնց շնորհիվ դասախոսին հաջողվում է ներգործել լսարանի վրա, հետաքրքրել նրան, նրա հետ կապ հաստատել, խոսքը հստակ ու ընդգծված դարձնել /Долеевская, 1982/: Թեև դասախոսության ճարտասանական կողմնորոշումը չի սահմանափակվում միայն առանձին հնարների դրսևորմամբ, այլև կապվում է յուրաքանչյուր բառի և հնչյունի հետ, հասկանալի է, որ նախ և առաջ անհրաժեշտ է լուսաբանել հռետորական արվեստի էությունն առավել ակնառու դեպքերում, որոնցից շատերը հիմնված են վերնշանային ծանրաբեռնվածությամբ առոգաբանության նշույթավորված տեմբր 2-ի կիրառության վրա: Այնուամենայնիվ, ճիշտ չէր լինի

կարծել, որ դասախոսությունն ամբողջությամբ կառուցվում է մնան հնարների վրա: Անկասկած, լսարանի կողմից այն ընկալվում է որպես «չեզոք» ֆոն, որի վրա էլ նշույթավորված տեմբր 2-ը ձեռք է բերում հատուկ արտահայտչականություն և նշանակություն: Այնուամենայնիվ, որպեսզի հստակ սահմանենք, թե ինչ է իրենից ներկայացնում «չեզոք» ֆոնը և ինչպիսին են նրա փաստացի դրսևորումները, դիտարկենք առոգաբանական բնութագրիչները, որոնք կազմում են տեմբր 2-ը:

### **Խոսքի մեղեդայնությունը և տեմբր 2-ը**

Չեզոք հնչողություն ունեցող դասախոսությունն ուսումնասիրելիս, առաջին հերթին ուշադրությունը սևեռվում է խոսքի մեղեդայնության վրա: Հնչերանգային կոնտուրների երևան գալը, որոնք բնորոշ են հաղորդման առավել չեզոք ձևերին, գիտական հաղորդակցման ռեզիստի վերշարահյուսական ֆոնի որպես «չեզոք» բնորոշման ճանապարհին առաջին քայլն են հանդիսանում:

Անգլերեն խոսքի հնչյունաբանական առանձնահատկությունների վերլուծությունը թույլ է տվել բացահայտել բանավոր խոսքի կազմակերպման առավել բնորոշ միջոցները (մասնավորապես դասախոսություններում), ցույց տալ այնպիսի հնչյունաբանական կոնտուրների տիպաբանական բնորոշ գծերը, ինչպես վարընթաց սանդղակը (a descending scale) և խախտվող աստիճանաբար իջնող սանդղակը (a broken descending scale) չեզոք (հուզարտահայտչական առնչանակության տեսանկյունից) խոսքային միավորների ձևավորման համար:

Մեր կողմից վերլուծվող յուրաքանչյուր դասախոսության մեջ կան նյութ, որը հաստատում է նախօրոք արված դիտարկումը: Օրինակ՝

*So far we've been looking at grammar, phonology, lexis, / under'standing the individual bits of language: the sounds, the words, the structures. // Discourse analysis looks at what happens when language is actually used in communication and attempts to identify specific features of different types of language use and also specific structures. // It sees language use as being a rule governed, that there are rules for who says what, who says it when and how we say it. // And it attempts to identify those particular rules. It's a very, very big field. // And discourse analysis has been a field of study for about forty years now and it*

*'tended to 'split into 'various 'areas of 'interest ' which have gone often their 'own di 'rections. // I am not di'stinguishing be'tween ' these ' although you often find it described as 'separate 'fields: prag 'matics, / conver'sational a 'nalysis, / 'genre a 'nalysis / and 'so 'on. // I'm 'going to be dis'cussing 'fall under the ge'neric 'term of 'discourse a 'nalysis. // <http://www.youtube.com/watch?v=lzSWsKvAqpO/>*

Դասախոսի կողմից օգտագործվող վերընթաց և վարընթաց տոները ոչ տերմինալ (վերջին շեշտված վանկն իր անշեշտ վանկերի հետ) շարույթներում, ինչպես և ասույթի ձևավորումն ընդհանուր առմամբ իջնող սանդղակի օգնությամբ, միշտ խոսում է դասախոսի լսարանին տեղեկատվություն հաղորդելու ձգտման մասին, ինչով և պայմանավորվում է նրա կողմից օգտագործվող չեզոք առոգաբանությունը:

Ինչևիցե, չեզոք մեղեդայնության կիրառությունը չի կարող սահմանափակվել նման դեպքերով: Ասույթի բովանդակային կողմի և հնչողության վերլուծությունը դրանց սերտ միասնության մեջ թույլ է տալիս գալ այն եզրակացության, որ մեղեդայնության չեզոքությունը դասախոսության ռեգիստրում շատ ավելի բազմաբնույթ է ու բարդ: Բանն այն է, որ, դասախոսությունն ունի ճարտասանական ուղղվածություն: Նյութի բացատրության ընթացքում խոսողին երբեմն անհրաժեշտ է լինում ընդգծել բառը կամ բառախումբը, առանձնացնել, հաճախ նաև հակադրել գլխավորն ու երկրորդականը, որպեսզի հասցեատերը կարողանա ճիշտ ուղղությամբ կենտրոնացնել ուշադրությունը: Հատկապես այս պատճառով, միանգամայն բնական է դառնում այն, որ դասախոսը այսպիսի նպատակներով մշտապես օգտագործում է մեղեդայնությունը (վերընթաց և վարընթաց տոների օգտագործումը տրամաբանական շեշտադրման և գլխավորը երկրորդականին հակադրելու նպատակով միանգամայն անհրաժեշտ է դասախոսության մեջ): Մեղեդայնության նման կիրառությունը (լայն վարընթաց տոն, վարընթաց-վերընթաց տոն) մեր կողմից վերագրվում է չնշույթավորված տեմբր 2-ին: Վերնշանային մակարդակում նման վերշարահյուսական միջոցների օգնությամբ իմաստային հավելյալ նրբերանգներ չեն ստեղծվում: Օրինակ՝

*When 'I 'started 'teaching at 'Reading Uni 'versity / I 'found that I had ...er... 'colleagues like the au 'thority 'David 'Crystal / who 'was 'taking the 'whole 'field of 'prosody / and 'turning it 'upside- 'down ' ?*

and 'shaking it 'hard & ...er... to 'see what 'came ,out. He had 'radically new ideas & or seemed to me on how we should ,look at this subject. Essentially what he said was if 'intonation and other 'aspects of 'prosody are doing 'anything ,for us. The ,system that we use & is 'much / 'much 'more ,complex / than the simple ,picture, & ,portrait in books like O'Connor and ,Arnold. And he 'demonstrated this very ,thoroughly & before he 'finished his ,doctorate & he was working with professor 'Randolph ,Quark & and began publishing with him in the early 1960-s, 1964 and then later produced his big book on prosodic systems and 'intonation of ,English in '19, '69. And for most of you that period is 'ancient ,history & but to me it was the time when I 'felt that my ideas about prosody were com\pletely changed & and I began to appreciate just 'how 'much there ,was & that we 'didn't ,know.

Crystal was very con\cerned about the re\lationship between 'prosody and the rest of the lin\guistic 'world / and he suggested that we should consider a con\tinuum. /[http:// www.youtube.com/watch?v=cc6HFCZhuU/](http://www.youtube.com/watch?v=cc6HFCZhuU/)

Ընդգծելով անգլերենի առոգաբանության բնագավառում եղած ձեռքբերումները, Դեյվիդ Քրիսթլի ունեցած հսկայական ներդրումը, դասախոսը խոսքում առանձնացնելով “authority”, “radically” բառերը բարձր վարընթաց տոնի, “completely” բառը բարձր լայն վարընթաց տոնի և “world” բառը վարընթաց-վերընթաց տոնի օգնությամբ, հակադրում է դրանք իրար, և, այդպիսով ցույց է տալիս, թե որքան էր կարևորում Քրիսթլը առոգաբանության դերը լեզվաբանական աշխարհի համատեքստում:

Դասախոսության մեջ չնշույթավորված տեմբր 2-ի հետ կապված, կուզեինք խոսել դասախոսության առանձնահատկություններից մեկի մասին: Ինչպես ցույց է տալիս նյութի քննությունը, միշտ չէ, որ խոսքն ավարտվում է վարընթաց տոնով: Հասկանալի է, որ, եթե դասախոսը խոսում է հանպատրաստից, այսինքն՝ նա չի կարողում նախօրոք պատրաստած տեքստը, մի նախադասության ավարտը և մյուս նախադասության սկիզբը միշտ չեն ունենա այն տեսքը, ինչպես ներկայացվում է ուսումնական տեքստերում, այսինքն՝ վարընթաց տոն, երկար դադար մի նախադասության վերջում և ձայնի բարձրության մակարդակի մեծացում մյուսի սկզբում /O'Connor, 1963/: Որպես կանոն, խոսքում պահպանվում են միայն նոր նախա-

դասության սկզբի նշանները, իսկ հատկապես ձայնի բարձրության աճ և ձայնի բարձրության մակարդակի մեծացում: Այսպիսով, նախադասության վերջում հաճախ օգտագործվում է վերընթաց տոնը, որին միշտ չէ, որ հաջորդում է երկու միավորից կազմված դադարը:

Օրինակ՝

*The 'other 'type of a 'pproach to into 'nation that I felt was 'genuinely 'new ʌ over the last 'few , decades / was 'discourse into , nation. / And it's 'probably a , pparent ʌ you al'ready are the kind of , person / that 'gets ex'cited by new i 'deas ʌ and then 'later on 'gets the so , lution. // 'Discourse into , nation again ʌ I fell in , love with ʌ when it came , out. / **Some of my 'colleagues thought that I was , crazy.** / Sir Dejanguins Louis said that I... I've 'gone com'pletely ba , nanas / but I 'thought that this was dis , covering ʌ or 'bringing , up for the 'first , time some 'things about into , nation ʌ that 'needed to be , said. //*  
*/www.youtube.com/watch?v=-cc6HFCZhuU /*

Բերված օրինակում *Some of my 'colleagues thought that I was , crazy.* նախադասության վերջում հեղինակն օգտագործում է վերընթաց տոն և մեկ միավորից կազմված դադար: Սա խոսում է այն մասին, որ բանախոսը ոչ թե կարդում է այն, այլ աշխատում է ներկայացնել կենդանի խոսք՝ երբեմն համեմեղով այն հումորով, որպեսզի լսարանը չճանձրանա և հաճույք ստանա դասախոսությունից: Իսկ քանի որ մտքերը սկսում են հորդել ընթացքում, այլևս անհիմաստ է մտածել, թե նախադասությունը կավարտվի մե՞կ, թե՞ երկու միավորից կազմված դադարով:

Այսպիսով, դասախոսության մեղեդայնության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հնարավոր չէ հաղորդել դասախոսության չեզոք մեղեդայնության ամբողջ բազմազանությունը իջնող սանդղակի և խախտվող աստիճանաբար իջնող սանդղակի կիրառությամբ:

### Չայնաժավալ

Խոսքային ձայնաստեղծման կարևոր հանգամանք է հանդիսանում ձայնաժավալը: Խոսողի կողմից տարբեր ձայնաժավալների (միջին, ցածր, բարձր) օգտագործումը պայմանավորված է մի կողմից խոսքի շարահյուսական կառուցվածքով, իսկ մյուս կողմից՝ նրա հռետորական ուղղվածությամբ:

Խոսքի ճարտասանական կառուցվածքի կանոնների համաձայն ձայնաձևավալի ստորին հատվածը (հաճախ արագացված տեմպի համադրությամբ) օգտագործվում է խոսույթի այն մասերը ձևավորելու համար, որոնք քննվող նյութի համար կարևորություն չեն ներկայացնում կամ էլ իրենցից այնպիսի փաստեր ու երևույթներ են ներկայացնում, որոնք լսողներին լավ հայտնի են:

Գասախոսության կարևոր մասերը, որոնք քննվող նյութի համար հատուկ կարևորություն են ներկայացնում, կարող են ուղեկցվել խոսողների կողմից ձայնաձևավալի վերին հատվածի օգտագործմամբ (մեծ մասամբ ձայնի բարձրացմամբ և դանդաղ տեմպով):

Օրինակ՝

*Well, the Globe is known for its original practices. This is far, it is here to try and recreate the theatre as it was in 1600 and thereabouts. And when they started it off, they decided to do original costume, original music with original instruments, original movement around the stage and so on. // But they never did original pronunciation, because they thought, quite wrongly but understandably, they thought nobody would understand it. It was a very, very successful occasion. The seats were packed for that weekend, everybody loved it. // And it was such a success that the Globe then decided to do a second production the following year, a production of choice and Cressida. /<http://www.youtube.com/watch?v=gPlpphT7n9s/>*

Ընդգծված հատվածում ձայնին հնչականություն հաղորդելով ու բարձրացնելով այն, հեղինակը փորձում է հերքել ընդունված թյուր կարծիքը, թե բնագրով արված շեքսպիրյան ներկայացումները հասկանալի չեն լինի հանդիսատեսին:

### **Չայնի բարձրություն**

Գիտական հաղորդակցման ռեգիստրում ձայնի բարձրության վերաբերյալ արդեն որոշակի տվյալներ ստացվել են Մ. Ն. Կոզլիբեվայի աշխատանքում, որը նվիրված է ձայնաստեղծման խնդիրներին: Տեմբրային վերշարահյուսության ուսումնասիրության ժամանակ հատուկ իմաստ են ստանում այն հետևությունները, որոնք ստացվել են այս աշխատանքում ձայնի բարձրության չափերի վերաբերյալ: Հաստատվել է, որ ձայնի բարձրության մակարդակը կոնկրետ տվյալ խոսքային գործունեության համար, պայմանավոր-

ված է ձայնի բարձրության միջին մակարդակով, ձայնի բարձրության տարբերակներով, որոնք բնորոշ են տվյալ ռեգիստրին, ձայնածավալով, որն ընդունելի է տվյալ ռեգիստրի համար, ինչպես նաև ձայնի բարձրության տեսակներով, որոնք բնորոշ են տվյալ լեզվին: Ըստ հետազոտողների, հատկապես դասախոսությունների ռեգիստրը ձայնի բարձրության չափանիշների իրագործման պլանում հանդիսանում է ամենակառավարելին:

Բացի այդ, առանձնացվել է ձայնի բարձրության հինգ մակարդակ (ձայնի բարձրության միջին մակարդակի համեմատությամբ, որը հաստատվել է կոնկրետ տվյալ խոսքային իրադրության համար): Դրանք են՝ նորմալ (սովորական), ցածր, շատ ցածր, բարձր, շատ բարձր: Չնայած տվյալ դասակարգման մեծ պայմանականությանը, անհրաժեշտ է նշել, որ ձայնի բարձրության այդ մակարդակները հեշտությամբ ընկալվում են լսողությամբ և կարող են հեշտությամբ վերարտադրվել դասախոսների կողմից, որոնք ձգտում են բարելավել ձայնաստեղծման տեխնիկան:

Դասախոսության ռեգիստրում ձայնի բարձրության փոփոխությունները պայմանավորված են, նախ և առաջ, ասույթի շարահյուսական կառուցվածքով: Ինչպես հայտնի է, միջանկյալ նախադասությունները խոսքում առանձնանում են տարբեր առոգաբանական միջոցների օգնությամբ, իսկ մասնավորապես ձայնի բարձրության իջեցմամբ և արագ տեմպով:

Ձայնի բարձրությունը կարևոր դեր է խաղում ասույթի ճարտասանական ձևավորման համար: Նախ և առաջ դա վերաբերում է այն դեպքերին, երբ ձայնի բարձրության տեսակները ծառայում են կարևոր բառի կամ բառախմբի առանձնացման խնդրին:

Բանախոսի ձգտումը՝ ճարտասանական տեսանկյունից ճիշտ կառուցել իր խոսքը, լսողների ուշադրությունը հրավիրել դասախոսության առանձին մասերի վրա, որոնք կարևոր նշանակալություն ունեն քննվող նյութի էությունն ըմբռնելու համար, դրսևորվում է այդ մասերում ձայնի ընդգծված բարձրությամբ: Այդ առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ կարևոր բառերն ընդգծելու համար ձայնի բարձրության մեծացումն ուղեկցվում է բարձր լայն վարընթաց տոնով, որը խոսքին հաղորդում է մեծ արտահայտչականություն:

Դասախոսություններում ձայնի բարձրության իջեցումը պայմանավորված է կամ նրանով, որ հասցեագրողը հաղորդում է բոլորին

հայտնի բանի մասին և կարևոր չի համարում լսարանի ուշադրությունը հրավիրել դրա վրա, կամ էլ խոսում է մի բանի մասին, որն անմիջական կապ չունի քննարկվող նյութի հետ:

Այսպիսով, դասախոսության չեզոք առոգաբանության մեջ ընդգծվել են ինչպես այն դեպքերը, որոնք շարահյուսորեն պայմանավորված են ձայնի բարձրության տեսակներով, այնպես էլ այն դեպքերը, որտեղ ձայնի բարձրությունն օգտագործվում է տրամաբանական շեշտադրման, ինչպես նաև գլխավորը երկրորդականին հակադրելու համար: Օրինակ՝

*As a general encyclopedia editor I was for many years professionally interested in anniversaries and the events that give rise to them. Anniversaries, as it were, helped pay the mortgage. In a same capacity I also learned to be deeply suspicious of them. I once edited a*  
forte

*book called 'Omnis Day. A sort of listing that you find in many a newspaper or magazine recording events which happened on a particular, day / and D. Brown referred to two or three earlier on. My editorial team collected information relating to some fifteen thousand supposed anniversaries. As we began the process of checking,*  
forte

*we found that about a half of this had to be jettisoned / either*  
forte

*because of conflicting unverifiable claims or because the data was unverifiable in principle. Anniversaries aren't as easy to celebrate as you might think. Take the apparently simple aim. slow tempo*

*To celebrate the year in which, if you are interested in beginnings,*  
fast tempo

*Shah Jahan began to build the Taj Mahal, vor ? if vendings, ? the year in which the building was completed.*

*<http://www.youtube.com/watch?v=MleDOuRWeYA/>*

Հորելյաններին նվիրված դասախոսության մեջ մեծահոշակ լեզվաբան Դեյվիդ Քրիսթըրը բազմիցս օգտագործում է բարձր ձայնը և բարձր լայն վարընթաց տոնը, երբ ներմուծում է կարևոր միտք, կամ առանձնացնում է գլխավոր միտքը երկրորդականից: Նման դեպքում անհրաժեշտություն է առաջանում նաև կիրառել դանդաղ տեմպ, որպեսզի լսարանն ավելի լավ ընկալի այն: Իսկ միջանկյալ նախա-



դասությունները կամ լսարանին հայտնի տեղեկատվությունն արտասանվում են արագ տեմպով և համեմատաբար ցածր ձայնով, ինչպես երևում է մեջբերված դասախոսության մեջ:

### Գաղար

Դասախոսության չեզոք առոգաբանության ստեղծման հատուկ միջոց է հանդիսանում խոսողի կողմից ասույթի բաժանումը շարույթների (фразировка) /Ахманова, 1966:495/: Շարահյուսության բնագավառում շատ հետազոտությունների շնորհիվ, ներկայումս մենք հստակ պատկերացում ունենք տարբեր շարահյուսական կապերի և բանավոր խոսքում զանազան դադարների օգնությամբ դրանց իրականացման մասին: Այնուամենայնիվ, չնայած այն բանին, որ բավականին պարզ ու հստակ ցույց է տրվել, թե իրենցից ինչ են ներկայացնում ստորոգելիական, բաղիյուսական, շաղկապող, հռետորական, տարակուսանք արտահայտող դադարները, մտորում, զգուշավորություն, արտահայտող, ինչպես նաև լուսաբանող (հիմնականում ձայնային) դադարները, հաճախ դադարների դասավորվածությունը կախված է ոչ միայն շարահյուսական կապերն իրականացնելու անհրաժեշտությունից, այլև խոսողի մտադրությունից: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ «ցանկացած տեքստի մասերի բաժանելը միշտ ենթադրում է բովանդակային ընկալման՝ մեկնաբանության փոփոխություն»՝ պայմանավորված համատեքստի փոփոխությամբ:

### Օրինակ՝

*In his ability to create and expand a vast repertoire of signals, / communicating everything from basic, / instinctive reactions to the most complex and abstract thoughts, / man is set apart from his fellow animals. // Like the animals, / man uses gestures, / expression, / posture, / touch / and scent / for communication. // But man also uses languages / – up to 10,000 of them, / some confined to a single tribe / and others, / such as English, / spoken world-wide.*

*Armed with radio, / television, / printing / and recording techniques, / man can preserve his knowledge, / and – for good or ill – can in form, / educate, / persuade / and entertain an audience of millions. // (w.davidcrystal.com/DC\_articles/Linguistics37.pdf)*

“Inform”, “educate”, “persuade”, “entertain” բառերը բաժանելով առանձին շարույթների, դասախոսը կարծես կրկին նշում-թվարկում է այն ամենը, ինչի մասին հենց նոր էր հաղորդել: Հատվածի նշումները վկայում են այն մասին, որ խոսողը ձգտում է մեկ անգամ ևս լսողներին հիշեցնել դասախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրները:

Այսպիսով, չնայած բարձրության, տեմպի, ձայնաձևավալի, ձայներանգների օգտագործման վերնշանային տարբերակների բացակայությանը, որոնք դասախոսության առանձին մասերում նկատվում են, խոսողի մտադրությունը բավականին հստակ է արտահայտվում:

### **Տեմպ**

Դասախոսության տեմպի առանձնահատկությունների ուսումնասիրությունը հաստատում է վաղօրոք արված դիտարկումները գիտական հաղորդակցման ռեգիստրում շարահյուսորեն և ճարտասանորեն պայմանավորված տեմպի վերաբերյալ: Ինչպես հայտնի է, դասախոսության մեջ տեմպի արագությունը կապված է միջանկյալության երևույթի կամ լսողներին հայտնի տեղեկատվություն փոխանցելու հետ, կամ էլ իրենից ներկայացնում է փաստ կամ երևույթ, որի կարևորությունը երկրորդական է:

### **Օրինակ՝**

*Of all aspects of language study, the origins and history of language probably has the most popular appeal. But for every ounce of fact there is a pound of speculation. At the popular level, “folk” etymologies abound*

*slow tempo*

*(e.g. assuming that slow-worm comes from slow, when in fact there is no connection between the words); and this is paralleled at the academic*

*fast tempo*

*level by two centuries of controversy among philologists.*

*([www.davidcrystal.com/ ?fileid=-4189](http://www.davidcrystal.com/?fileid=-4189))*

Վերը բերված օրինակը ցույց է տալիս, որ դասախոսներն արագ տեմպն օգտագործում են կամ միջանկյալ նախադասություններ ձևավորելու, կամ ասույթի այն մասերի ձևավորման համար, որտեղ խոսքը գնում է երկրորդական փաստերի ու երևույթների մասին: Հաճախ արագ տեմպը խոսողների կողմից օգտագործվում է դասախոսության առանձին մասեր ձևավորելու համար, որոնք էական նշանակություն չունեն նյութի բացատրության համար:

Իսկ այն, ինչ վերաբերում է դանդաղ տեմպին, ապա դրա կիրառությունը դասախոսության ռեգիստրում ունի ճարտասանական ուղղվածություն: Խոսողի դանդաղ տեմպը ցույց է տալիս այն, որ նա հատուկ նշանակություն է տալիս բառին, բառախմբին, դասախոսության հատվածին, ձգտում է լսողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա:

Այսպիսով, դասախոսություններում օգտագործված տեմպը, որը պայմանավորված է ճարտասանության կանոններով, հարկ է գնահատել որպես չնշույթավորված տեմպը 2-ի բաղադրիչ: Ինչպես տեմպի արագությունը, որն ունի շարահյուսական կամ հռետորական ծանրաբեռնվածություն, այնպես էլ նրա դանդաղությունը հանդիսանում է դասախոսության ձևավորման չեզոք վերջարահյուսական բաղկացուցիչ մաս, քանի որ տեմպի վերլուծված տարբերակների օգնությամբ չեն ստեղծվում իմաստների հավելյալ հուզարտահայտչական երանգներ:

### **Չայնորակ**

Գիտական հաղորդակցման ռեգիստրում տեմպը 2-ի ամենաքիչ ուսումնասիրված բնութագրիչներից մեկը հանդիսանում է ձայնորակը: Հայտնի է, որ դասախոսությանը հատուկ է հնչականությունը, այսինքն՝ դա «ձայնի այն որակն է, որը կազմում է ձայնի մշակման բաղադրիչներից մեկը, քանի որ արտաբերվում է հնչական բալանսի առավելագույն հավասարակշռության պայմաններում: Դա ձայնի այն որակն է, որն անհրաժեշտ է ուսումնասիրել»:

Եթե հնչականությունը համարվում է չափանիշ գիտական հաղորդակցման ռեգիստրում, ապա այլ ձայներանգների ի հայտ գալը իրենից հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ շատ դեպքերում դա կապված է դասախոսության մեջ իմաստի հավելյալ հուզարտահայտչական երանգների ներմուծման հետ:

Գիտական խոսքի առոգաբանության թվարկված առանձնահատկությունները, և հատկապես չնշույթավորված տեմպը 2-ը, կազմում են նրա վերջարահյուսական կառուցվածքային հիմքը՝ առանց որոնց տիրապետման հնարավոր չէ գիտական հաղորդակցումը: Հատկապես այդ պատճառով շատ գիտնականներ նախ և առաջ անդրադարձել են հնչող գիտական խոսքի այդ կողմին, որի արդյունքում այդ բնագավառում կուտակվել են տվյալներ, որոնք մեզ թույլ են տվել մոտենալ գիտական հաղորդակցման ռեգիստրում

չնշույթավորված տեմբր 2-ի լուսաբանմանը որպես առողջաբանական նշանների ամբողջություն, որոնք չեզոք են վերշարահյուսական մակարդակում:

Ինչևհետե, գիտական խոսքն իր վերշարահյուսական առանձնահատկությունների տեսանկյունից չի հանգեցնում չնշույթավորված տեմբր 2-ին: Նշույթավորված տեմբր 2-ի առանձին դեպքերի օգտագործումն արդեն քննվել է մեր կողմից: Այժմ փորձենք որոշակի պատկերացում տալ այն մասին, թե ինչպես է հասցեագրողը խուսափում գիտական խոսքում նշույթավորված տեմբր 2-ը օգտագործելուց:

### **Նշույթավորված տեմբր 2**

Փորձելով լուսաբանել, թե իրենից ինչ է ներկայացնում գիտական խոսքի նշույթավորված տեմբր 2-ը, մենք կարողացանք առանձնացնել վերշարահյուսական միջոցների որոշակի համակարգ, որոնք օգտագործվում են գիտական հաղորդակցման ռեգիստրում տարբեր իմաստների հուզարտահայտչական և գնահատողական երանգներ արտահայտելու համար: Մասնավորապես պարզվեց, որ հավելյալ իմաստային երանգների շղթա հաղորդելու համար լայն ինտերվալով բարձր վարընթաց տոնի օգտագործումը, որպես կանոն, զուգորդվում է բարձրության մեծացմամբ, բարձր լայն վարընթաց տոնի օգտագործմամբ, դանդաղ տեմպով: Բարձր լայն վարընթաց տոնը և դանդաղ տեմպը ուղեկցվում են ձայնի խլացմամբ:

Օրինակ՝

*Prosody does not exhaust all the non-verbal vocal effects available in English. The various cavities of the throat, mouth, and nose can each be used to produce 'tones of voice' that alter the meaning of what*

*slow*

*is being said. These effects are often called paralinguistic – a term which*

*slow*

*suggests that they play a less central role in the sound system than prosodic features do. The following examples of paralinguistic effects are accompanied by a gloss indicating the context in which they commonly occur:*

*whisper – secrecy or conspiracy,*

*breathiness – deep emotion or sexual desire,*

*huskiness – unimportance or disagreement,  
nasality – anxiety,  
extra lip-rounding – intimacy (especially to animals and babies)*  
/Crystal, 2003:249/.

Տվյալ դեպքում “tones of voice” բառերի առանձնացումը բարձր լայն վարընթաց տոնի և բարձրության մեծացման օգնությամբ հարկ է դիտել որպես նշույթավորված տեմբր 2-ի դրսևորում: Այն, ինչ վերաբերում է “paralinguistic” բառի առանձնացմանը այնպիսի առոգաբանական միջոցների օգնությամբ, ինչպիսիք են բարձր լայն վարընթաց տոնը, բարձրության մեծացումը և դանդաղ տեմպը, ապա այն պայմանավորված է մի կողմից ներակա հնչերանգով, որը հատուկ է բառին, իսկ մյուս կողմից դասախոսի խոսքի հռետորական ձևավորմամբ, այդ բառի վրա ուշադրություն հրավիրելու անհրաժեշտությունից ելնելով (հռետորական շեշտադրում): Օրինակ՝

*According to tradition, King Arthur devised the \round table so that, when his knights were seated around it, none of them could claim precedence over the others. This has always seemed to me to provide an excellent precedent for those who have found their happiness levels circumscribed because they are un’able to de’termine pri’orities among*  
slow

*levels of linguistic representation. There is something intuitively \satisfying about circles, and I have always found it helpful to work with a circular model in which different levels of language rest side by side, with none constituting a beginning or end, and all \patently \equal.*

/www.davidcrystal.com/?fileid=-4170/

Ինչպես երևում է տվյալ հատվածի նշումներից, բարձր լայն վարընթաց տոնը և ձայնի բարձրացումը ուղեկցում են “round” բառին: “Satisfying”, “patently”, “priorities” բառերը խոսքում առանձնանում են բարձր լայն վարընթաց տոնով, դանդաղ տեմպով և ձայնի խլացմամբ, ինչը պայմանավորված է ներակա առնչանակությամբ:

Նշույթավորված տեմբր 2-ի կիրառությունը էական դեր է կատարում իմաստի զանազան հուզարտահայտչական-գնահատողական երանգներ ստեղծելու համար: Շատ հաճախ դասախոսն իր վերաբերմունքն արտահայտում է վերջարահյուսական առոգաբանական միջոցների օգնությամբ:

Վերլուծվող նյութը չափազանց հետաքրքիր է ոչ միայն այն պատճառով, որ այն առավել մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկում գիտական խոսքում նշույթավորված տեմբր 2-ի դրսևորումների վերաբերյալ պատկերացումները: Եթե մենք դիմենք քննվող նյութի բովանդակային կողմին, ապա կհանդգվենք, որ նշույթավորված տեմբր 2-ը միշտ համեմատվում է ասույթի արտահայտման հետ, որը փաստերի, իրադարձությունների, երևույթների նկատմամբ դրսևորված վերաբերմունքն է, մինչդեռ չնշույթավորված տեմբր 2-ը օբյեկտիվ ինֆորմացիայի վերարտադրությունն է առանց սուբյեկտիվ գնահատականի:

Ամփոփելով վերը ասվածը, կարելի է եզրակացնել, որ.

1. Չնշույթավորված տեմբր 2-ը հանդիսանում է գիտական հաղորդակցման վերշարահյուսական ձևավորման հիմքը՝ ներգործման գործառույթի վրա հաղորդման գործառույթի ազդեցության շնորհիվ:
2. Չնշույթավորված տեմբր 2-ը ձայնային մոդուլյացիաների ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս արտահայտել շարահյուսական կապեր, տրամաբանական հակադրություններ, հռետորական շեշտադրումներ:
3. Նշույթավորված տեմբր 2-ի օգտագործումը հնարավոր է և անհրաժեշտ գիտական խոսքում: Այն ապահովում է ասույթի գնահատման արտահայտումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ахманова О. Словарь лингвистических терминов. М.: «Советская энциклопедия», 1966.
2. Долгова О. В. Семиотика неплавной речи // М.: Высшая школа, 1978; Гаман Н. П. Семиотика предидирующей паузы // Автореф. дисс. канд. филол. наук. М., 1977; Чхартившвили М. Ш. Просодия комплетивной связи в современном английском языке // Автореф. дисс. канд. филол. наук. М., 1977.
3. Долгова О. Семиотика неплавной речи. М.: Высшая школа, 1978.
4. Долецкая Е. Риторика лекторской речи. Дисс. канд. филол. наук. М., 1982.

5. Козырева М. Речевой голос как объект языковедческого исследования. Дисс. канд. филол. наук. М., 1980.
6. Crystal D. The Cambridge Encyclopedia of the English Language. Cambridge University Press, 2003.
7. Hirst D., Di Cristo A. Intonation Systems: A Survey of Twenty Languages. Cambridge University Press, 1998.
8. [books.google.com/books/about/A\\_Course\\_of\\_English\\_Intonation.html?id...](https://books.google.com/books/about/A_Course_of_English_Intonation.html?id...)

**М. ХАЖАКЯН** – *Тембр 2 как текстообразующее средство.* – В статье конкретизируется представление о проявлениях маркированного тембра 2 в научной речи. Если обратиться к содержательной стороне изучаемого материала, то можно убедиться в том, что маркированный тембр 2 всегда сравнивается с выражением высказывания, передающего оценку излагаемого, отношение к фактам, событиям, явлениям, в то время как немаркированный тембр 2 сравнивается с изложением объективной информации вне ее субъективной оценки.

**М. КХАЗНАКЯН** – *Timbre 2 as a Means of Text-Structuring.* – The use of marked Timbre 2 plays an essential role in creating different emotional-expressive-evaluative overtones. Quite often it is achieved by means of suprasegmental prosodic means. The paper scrutinizes the expressions of Timbre 2 in scientific register. If we consider the content of the subject, we shall see that marked Timbre 2 is always compared with the expression of the utterance, while unmarked Timbre 2 is the reproduction of objective information without any subjective evaluation.